Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երեւան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.grantthornton.am

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ բաժնետիրական ընկերության բաժնետիրոջը և խորհրդին.

Ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Բանկ») ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները՝ քաղված Բանկի 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից: Մենք այդ հաշվետվությունների վերաբերյալ 2015թ. ապրիլի 15-ի մեր եզրակացությունում արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական կարծիք:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում (ՖՀՄՍ): Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Բանկի աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտորական ստուգում անցած ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որտեղ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են միևնույն ձևով, ինչպես և աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների, որոնք չեն ներառվում այս ամփոփ ֆինանսական հաշվետվություններում:

Grant Thornton

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա, արտահայտել եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ աուդիտի միջազգային ստանդարտ 810 *«Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ»* ստանդարտին համապատասխան:

Եզրակացություն

Մեր կարծիքով 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ բաժնետիրական ընկերության աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից քաղված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են այդ ֆինանսական հաշվետվություններին:

Գագիկ Գյուլբուդաղյան
Տնօրեն/բաժնետեր

Վահագն Փայան
Աուդիտի ղեկավար

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
15 ապրիլի 2015թ.
ք. Երևան